Էջ 3

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/11
## N 11/207-2020

ք. Երևան «10» 03 2020 թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա.Գ. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «ԱԲԻ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Գ. Քեշիշյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **22 686 900 (քսաներկու միլիոն վեց հարյուր ութսունվեց հազար ինը հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պլրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

### 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱԱԾ | «ԱԲԻ» ՍՊԸ |
| ք.Երևան, Նալբանդյան104 | ք. Երևան Նորքի 11փ 15տ |
| ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի | Արմսվիսբանկ |
| գործառնական վարչություն | |
| Հ/h 900011301067 | Հ/h 2500010620670100 |
| ՀՎՀՀ 01507079 | ՀՎՀՀ 01526588 |
| Տնօրենի տեղակալ | Տնօրեն |
| Ա. Հակոբյան | Գ. Քեշիշյան |

«ԱԲԻ» "АБИ" "ABI" 01526588

Հավելված N 1
«10» 03 2020թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
N 11/207-2020

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | | | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը*** | | | |
| | | | | | | | | | | | 90 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 31.03.2020թ. | 180 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 30.06.2020թ. | 270 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 30.09.2020թ. | 340 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 15.12.2020թ. |
| 3 | 18231210/507 | կիտել և կիսաշրջազգեստ | «ԱՐԻ» ՍՊԸ, <<ՏԵՔ ՍՈՒՈ ՐԼԴ>> ՍՊԸ | **Կիտել՝ ամենօրյա և կիսաշրջազգեստ: Կիտելը** բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում նաև վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները /գրպանների կափույրներ, օձիք/, նույնպես կրկնակարվում են սոսնձող կտորով, և վուշ-բրդյա քաթանով: Լանջափեշերը դարձածալերով, կոճկվում են 2, ՀՀ զինանշանի դաջվածքով 22 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով ձախ կողմից: Կողքերից, կտրվածքով երկու թերթիկավոր գրպաններ: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակված է կախիչ, թևերը ներկարված: Աստառը՝ մետաքսյա դեղնականաչավուն գույնի գործվածքից: **Կիսաշրջազգեստը՝** կազմված է առաջամասից, հետևամասից և ներկարված գոտուց: Հետևամասի ներքևում բացվածքով, հետևից վերնամասը՝ շղթայով կոճկվող, որը գոտու վրա | լրակազմ | 20700,00 | 1552500,0 | 75 | ք. Երևան, Այվազովսկու նրբ. 5 | 75 | 0 | 0 | 75 | 0 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կոճկվում է 1 կոճակ օղակով, ներսի կողմից մետաքսյա դեղնականաչավուն գույնի գործվածքից աստառով: **Կոստյումը՝** դեղնականաչավուն գույնի 2311 արտիկուլի կիսաբրդյա գործվածքից, 317 գրամ 1մ$^2$ մակերեսային խտությամբ 67% բրդի և 33% պոլիէսթեր բաղադրության: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/1 մինչև 56/4 չափս-հասակի: Կիտելի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ, իսկ ներքևից 1-ին կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, **Փաթեթավորումը՝** եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: | | | | | | | | | | |
| 4 | 18231210/506 | կիտել և կիսաշրջազգեստ | «ԱԲԻ» ՍՊԸ, <<ՏեՔ ՍՈՒՌ ԲԼԴ>> ՍՊԸ | **Կիտել՝ տոնական և կիսաշրջազգեստ: Կիտելը** բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում նաև վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները /գրպանների կափույրներ, օձիք/, նույնպես կրկնակարվում են սոսնձող կտորով, և վուշ-բրդյա քաթանով: Լանջափեշերը դարձածալերով, կոճկվում են 2 հատ ՀՀ զինանշանի դաջվածքով 22 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով ձախ կողմից: Կողքերից, կտրվածքով երկու թերթիկավոր գրպաններ: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակված է կախիչ, թևերը ներկարված: Աստառը՝ մետաքսյա | լրակազմ | 21000,00 | 630000,0 | 30 | ք. Երևան, Այվազովսկու նրր. 5 | 30 | 0 | 0 | 30 | 0 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | դեղնականաչավուն գույնի գործվածքից: **Կիսաշրջազգեստը՝** կազմված է առաջամասից, հետևամասից և ներկարված գոտուց: Հետևամասի ներքևում բացվածքով, հետևից վերնամասը՝ շղթայով կոճկվող, որը գոտու վրա կոճկվում է 1 կոճակ օղակով, ներսի կողմից մետաքսյա դեղնականաչավուն գույնի գործվածքից աստառով: **Կոստյումը՝** դեղնականաչավուն գույնի 2311 արտիկուլի կիսաբրդյա գործվածքից, 317 գրամ 1մ² մակերեսային խտությամբ 67% բրդի և 33% պոլիէսթեր բաղադրության: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/1 մինչև 56/4 չափս-հասակի: Կիտելի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ, իսկ ներքևից 1-ին կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, **Փաթեթավորումը՝** եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: | | | | | | | | | | |
| 5 | 18231410/505 | կիտել և տաբատ | «ԱԲԻ» ՍՊԸ, <<ՏԵՔ ՍՈՒՈ ՐԼԴ>> ՍՊԸ | **Կիտել տոնական և ազատոդ փողքերով տաբատ:** Կիսաբրդյա կոստյումը բաղկացած է կիտելից և ազատոդ փողքերով տաբատից: **Կիտելը** բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը կոճկվում են 4 ՀՀ զինանշանի պատկերով 22մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում սոսնձող կտորով և վուշ-բրդյա | լրակ ազմ | 24390,0 0 | 6585300,0 | 270 | ք. Երևան, Այվազովս կու նրբ. 5 | 270 | 0 | 270 | 0 | 0 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | քաթանով: Առանձին դետալները /գրպանների կափույրներ, օձիք/, նույնպես կրկնակարվում են սոսնձող կտորով, և վուշ-բրդյա քաթանով: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպաների ձևավոր կափույրները կոճկվում են մեկական ՀՀ զինանշանի պատկերով 14մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով, իսկ կողքերից՝ կտրվածքով, կափույրներով գրպաններ: Մեջքի ներքևում, կենտրոնից բացվածքով: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ, թևերը ներկարված: Աստառը՝ մետաքսյա դեղնականաչավուն գույնի գործվածքից: Ձախ լանջափեշին ներսամասից մշակվում է կտրվածքով ծոցագրման, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: **Ազատթող տաբատը** կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով: Աջ հետնամասում կտրված գրպան՝ կափույրով, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին 6 հատ կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում անցկացվում է 1.5-2մմ լայնությամբ կապույտ կամ կանաչ գույնի մահուդից երիզներ: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է մետաքսյա դեղնականաչավուն գույնի գործվածքից աստառ: **Կոստյումը՝** 2311 արտիկուլի կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից 317 գրամ 1մ² մակերեսային խտությամբ 67% բրդի և 33% պոլիէսթեր բաղադրության: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Կիտելի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ, իսկ վերևից 3-րդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | անվանումը, արտադրման տարեթիվը, **Փաթեթավորումը**՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: | | | | | | | | | | |
| 8 | 18221100/503 | անջրանցիկ հագուստ | «ԱԲԻ» ՍՊԸ, <<ՏԵՔ ՍՈԽՈ ՐԼԴ>> ՍՊԸ | **Գարնանային-աշնանային կիսավերարկու /հատ/:** Գարնանային-աշնանային կիսավերարկու դեղնականաչավուն գույնի 2311 արտիկուլի գործվածքից, 1մ$^2$ մակերեսային խտությունը՝ 317 գր, բաղադրությունը՝ 67% բուրդ, 33% պոլիէսթեր, տաք /սինտեպոն/ ներդիրով: Թիկունքամասը մշակվում է կոկետկայով: Կիսավերարկուն կազմված է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից, թևքերից: Լանջափեշերը կոճկվում են 4 հատ 18մմ դեղնականաչավուն գույնի պլաստմասե կոճակ օղակներով, մշակված գաղտնի եզրաշերտի վրա: Լանջափեշերի վրա կողքերից ներկարված թեք գրպաններ, օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ: Մեջքը՝ մեջտեղի կարով, թևքերը երկկարանի ներկարված: Ձախ լանջափեշին ներսից մշակվում է կտրվածքով ծոցագրպան, որը կոճկվում է 1 պլաստմասե կոճակով և օղակով, ներսի կողմից կարվում է արտադրաքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Գոտկատեղի կողքերին կարված է 2 գոտեմակող: Ունի գոտի պլաստմասե ճարմանդով և 2 գոտեմակող: Ուսադիրների շրջանում 2 փակ օղակներ և 2 կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Աստառը՝ մետաքսյա դեղնականաչավուն գույնի գործվածքից: Ներդիրը՝ /թիկունքը և թևքերը/ սինտեպոն: Աստառը, մգդակված է սինտեպոնով, շեղանկյուն կարերով: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված | հատ | 13380,00 | 4014000,0 | 300 | ք. Երևան, Այվազովսկու նրբ. 5 | 300 | 0 | 0 | 300 | 0 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափահասակի: Ապրանքը պետք լինի պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: **Փաթեթավորումը**՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն կիսավերարկուի չափսերին, որպեսզի կիսավերարկուն չճմրթվի: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: | | | | | | | | | | |
| 41 | 35811160/515 | մարտական հանդերձանք | «ԱԲԻ» ՍՊԸ, <<ՏեՔ ՍՈՒՌ ԲԼԴ>> ՍՊԸ | **Դաշտային կոստյում կեպիով բամբակյա, գունաքողարկման /կոմուֆլյաժ/ գործվածքից:** Դաշտային կոստյում կեպիով, սպայական, բամբակյա, գունաքողարկման թելի 4C5-KB-кмф արտիկուլի գործվածքից, 1մ² մակերեսային խտությունը՝ 210գր, բաղադրությունը՝ 53% բամբակ, 47% պոլիէսթեր: Կոստյումը բաղկացած է բաճկոնից, տաբատից և կեպիից: **Բաճկոնը** միալանջ, կոճկվում է կենտրոնական կոճկվածքով 5 օղակ կոճակներով, որից վերևից առաջին կոճակը կոճկվում է բաց կոճկվածքով, իսկ 4 օղակ կոճակները գաղտնի կենտրոնական կոճկվածքով: Բաճկոնն ունի ծալովի օձիք, որի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում մշակված են վրադիր չորս գրպաններ՝ կափույրներով, որոնցից երկուսը կրծքամասում, իսկ երկուսը՝ կողային՝ վրադիր կիսածալքուն: Կրծքամասի գրպանի լայնությունը 13սմ, երկարությունը 15սմ, կափույրը 6,5 սմ: Ձախ կրծքամասի գրպանի վրա ունի կտրվածք նախատեսված գրիչի համար: Առաջամասի կողային վրադիր գրպանների լայնությունը 16,5 սմ, երկարությունը 17 սմ, կափույրի լայնությունը 6,5 սմ: Առաջամասի գրպանները կոճկվում են գաղտնի կոճկվածքով՝ | լրակազմ | 11200,00 | 4368000,0 | 390 | ք. Երևան, Այվազովսկու նրբ. 5 | 390 | 0 | 0 | 390 | 0 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2 օղակ կոճակով: Գոտկատեղում մշակված են, 4 սմ լայնությամբ 2 ախլակներ՝ իրանի հարմարեցման չափսերի կարգավորման համար, ախլակները կոճկվում են մեկ օղակով և երկու կոճակով: Թևքերը ներկարված են ամբողջովին փակ զույգ կարերով: Արմունկի մասում մշակվում են, լրացուցիչ կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև արմնկակալներ: Կողքերի, թևքերի և ուսերի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Թևքերի ներքևի մասում մշակված են պատաններ, որոնք բազկակալում կոճկվում են մեկ օղակով և երկու կոճակով: Ուսերի վրա տեղադրված են ուսադիրներ ախլակների վրա նույն գործվածքից, ախլակները կոճկվում են մեկ կոճակ օղակով: Աստառը բամբակյա /բիազ/ գործվածքից, թիկունքի և կրծքավանդակի հատվածում: Աստառի ձախ կրծքամասում մշակված է վրադիր ծոցագրպան, որը կոճկվում է մեկ օղակով և կոճակով:<br>**Տաբատը** ուղիղ ձևվածքով է, ազատօրող փողքերով կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով: Աջ հետնամասում կտրված գրպան՝, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Առաջամասում կողքից, թեք ներկարված գրպաններ: Գոտին մշակված է 6 կամրջակով և գոտու չափը կարգավորող ներկարված 2 ախլակներով: Ախլակները կոճկվում են 1 օղակով և 2 կոճակով: Տաբատի առաջամասում արդուկի կարը /ստրելկա/ միակար կարված: Տաբատի փողքերը ծալված միակար կարված: Ներսի, դրսի և հետնամասի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Բաճկոնի և տաբատի միացման բոլոր կարերը կարվում են շղթայական փակ զույգ կարերով:Համազգեստի կոճակները՝ 12-15մմ տրամագծի, պատրաստված ջերմակայուն (չհալվող) նյութից, չորս կարանցքերով, եզրերը թեք անկյան տակ | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | երկկողմանի hոկված, երկողմանի կարվող, գույնը՝ պաշտպանական:<br>**Կեպին** աստառով է, կազմված է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից և հատակից: Կողամասերը /միջնամասը և հատակը/ մշակվում են սոսնձային կտորից միջադիրով և դեղնականաչավուն գույնի աստառով, բամբակյա /բիազ/ կտորից: Հետնամասում, կեպիի չափը փոփոխելու համար մշակված է պաշտպանական գույնի պլաստմասե կարգավորիչ: Հովհարը միանում է գլխարկին կտորի կողեզրերով: Հովհարին միջադրված է պլաստմասե միջադիր: Ճակատային մասին տեղադրված է 4 սմ լայնությամբ երկտակ կտորից կարված գոտի, միջադիրով: Հատակին տպագրական ներկով դրոշմվում է կեպիի չափսը: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի:<br>Բաճկոնի և տաբատի ներսամասում փակցվում է համազգեստի խնամքի վերաբերյալ պիտակ, որի վրա պետք է նշված լինի. արտադրող կազմակերպության անվանումը, չափս-հասակը, կտորի բաղադրությունը և խնամքի վերաբերյալ տեղեկություն /լվածքի $30^{0}C$ ջրի ջերմաստիճանի, արդուկման և քիմմաքրման/:<br>Բաճկոնի ձախակողմյան փեշին, ներքևի եզրից 3 սմ բարձրության վրա, ներսի կողմից պետք է լինի տպագրական ներկով դրոշմ: Դրոշմի վրա նշված՝ տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը:<br>Բաճկոնի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, **Փաթեթավորումը**՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | չճմրթվի: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: | | | | | | | | | | |
| 43 | 35811160/517 | մարտական հանդերձանք | «ԱԲԻ» ՍՊԸ, <<ՏԵՔ ՍՈԽՈ ԲԼԴ>> ՍՊԸ | **Ձմեռային կոստյում արհեստական մորթե օձիքով, կոմուֆլյաժ գործվածքից /լրակազմ/:** Ձմեռային կոստյում արհեստական մորթե օձիքով բամբակյա գունաքողարկման թելի 4C5-KB-кмф արտիկուլի անջրանցիկ շերտով գործվածքից, 1մ$^2$ մակերեսային խտությունը՝ 210գր., բաղադրությունը՝ 53% բամբակ, 47% պոլիէսթեր, տաք ներդիրով: Ձմեռային կոստյումը բաղկացած է բաճկոնից և տաբատից: **Բաճկոնի** առաջամասի և հետևամասի ներդիրը մշակվում է անջրաթափանց արհեստական կտորով, երկկողմանի մզդակարված 300 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, թևքերը՝ անջրաթափանց արհեստական կտորով միակողմանի մզդակարված 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Աստառը մշակվում է 70 գրամ մակերեսային խտությամբ արհեստական կտորից, բաղադրությունը՝ 100% պոլիէսթեր: Բաճկոնի թիկունքամասը մշակված է վրակարված կոկետկայով, երկու կարանի: Առաջամասերում մշակված են վրադիր 2 գրպաններ կրծքամասում և 2 ներկարված կողային թեք գրպաններ: Կրծքամասի գրպանի լայնությունը 14սմ, երկարությունը 15սմ, կափույրի լայնությունը 6,5սմ: Կափույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0.6սմ կարի լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0,1 սմ կարի լայնությամբ: Կափույրները կոճկվում են գաղտնի կոճկվածքով՝ 2 օղակ 15մմ տրամագծով կոճակով: Բաճկոնը ունի ներկարված թևքեր: Թևքերի բազկային մասում մշակված են եզրաշերտերի միջով անցնող էլաստիկ ժապավենից ամրացրած պատաներ, որոնք կոճկվում են օղակով և 2 հատ 15մմ տրամագծով կոճակներով:<br>Բաճկոնը կոճկվում է շղթայով և 5 հատ 18 մմ | լրակ ազմ | 18870,0<br>0 | 5472300,0 | 290 | Ք. Երևան, Այվազով սկու Նրբ. 5 | 290 | 0 | 0 | 290 | 0 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | տրամագծով կոճակ օղակներով, մշակված գաղտնի եզրաշերտի վրա: Բաճկոնի և թևքերի ներքևի եզրերը ծալված են և վրակարված: Ծալման լայնությունը պատրաստի վիճակում՝ 2սմ: Բաճկոնի դրսի կողմից գոտկատեղի ուղղությամբ մշակվում է 4-4,5սմ լայնությամբ գոտի /եզրաշերտ/ մեջը գոտկանման պարան՝ իրանի հարմարեցման չափերի կարգավորման համար: Վզատեղը մշակված է ծալովի օձիքով, որի միացման կարում մշակված է կախիչ: Լանջափեշի ձախ կողմում մշակված է ծոցագրպան ատրճանակի համար: Գրպանի ներսից ամրացվում է քուղ՝ մետաղական բռնակով: Բաճկոնի աստառի աջ կրծքամասում մշակված է ծոցագրպան՝ շերտիկով, որը կոճկվում է մեկ օղակով և կոճակով: Ուսերի վրա տեղադրված են ուսադիրներ ախլակների վրա նույն գործվածքից, ախլակները կոճկվում են մեկ կոճակ օղակով: Բաճկոնին կոճկվում է հանովի մորթե օձիք, որը կոճկվում է լրացուցիչ շերտին մշակված 5 օղակներով և բաճկոնին կարված 5 հատ 14մմ տրամագծով կոճակներով: Օձիքի մորթու 1մ$^2$ մակերեսային խտությունը՝ 730 գրամ +/-50գ/ մ$^2$, խավի բարձրությունը՝ 12մմ ոչ պակաս, գույնը՝ մոխրագույն: Մորթե օձիքի վզատեղի եզրը եզրակարված է երեսացուի կտորի եզրաշերտով: **Տաբատը**՝ մշակված է գոտիով՝ զարդակարված շեղանկյուն ձևով: Առաջամասը կողքի թեք կտրված գրպաններով: Գրպանի վերնամասը (բերանը) մշակված է 1 սմ լայնությամբ զարդակարով: Գոտու վրա տեղադրված են 6 կամրջակներ և գոտու չափը կարգավորող 2 ախլակներ: Ախլակները կոճկվում են 1 օղակով և 2 հատ 14 մմ տրամագծով կոճակով: Առաջամասում մշակված են ծնկակալեր: Տաբատի առաջամասում արդուկի կարը /ստրելկա/ միակար կարված: Տաբատը կոճկվում է գաղտնի կոճկվածքով, շղթայով և 1 հատ 14 մմ տրամագծով օղակ կոճակով, գոտու վրա: Տաբատի ներդիրը մշակվում է 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, որը մգդակարված է աստառի հետ՝ ներքին եզրից 15 սմ բարձրության վրա: | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Բաճկոնի և տաբատի ներսամասում փակցվում է համազգեստի խնամքի վերաբերյալ պիտակ, որի վրա պետք է նշված լինի. արտադրող կազմակերպության անվանումը, չափս-հասակը, կտորի բաղադրությունը և խնամքի վերաբերյալ տեղեկություն /լվածքի 30$^0$C ջրի ջերմաստիճանի, արդուկման և քիմմաքրման/: Բաճկոնի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: **Փաթեթավորումը՝** հակերով, հակերի մեջ 2 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Հակերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ, ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից: | | | | | | | | | | |
| 44 | 35821400/513 | դրոշներ | «ԱԲԻ» ՍՊԸ, <<ՏԵՔ ՍՈՒՌ ՐԼԴ>> ՍՊԸ | **ՀՀ դրոշ**: ՀՀ դրոշը եռագույն է, վերևից ներքև կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով: Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունն է (1:2)-ի: Կտորը ատլաս, 1 մ մակերեսային խտությունը 140-150գր, /1x2/ մ չափսերի: **Փաթեթավորումը՝** պոլիէթիլենային պարկերով, 1 պարկի մեջ 1 հատ, պիտակավորված: | հատ | 540,00 | 64800,0 | 120 | ք. Երևան, Այվազովսկու նրբ. 5 | 120 | 120 | 0 | 0 | 0 |

**Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի տես՝ ՀՀ վարչապետի 2018թ. սեպտեմբերի 17-ի N 1217-Լ <<Ազգային անվտանգության մարմինների զինծառայողների միասնական համազգեստը և տարբերանշանները հաստատելու մասին>> որոշումը:

*** Կրման ժամկետը տես՝ ՀՀ Կառավարության 2015թ. դեկտեմբերի 3-ի N1457-Ն որոշման հավելված N2 համաձայն:

**** Հանդերձանքի յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար, անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

Ծանոթություն՝ 1. Նախքան մատակարարումը սկսելը հանդերձանքի նմուշները համաձայնեցվում են Գնորդի հետ, որից հետո Գնորդը Վաճառողին տրամադրում է հանդերձանքի քանակները՝ ըստ չափսերի և հասակների:

2. Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ, ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից:

3. Ապրանքը ընդունում է պահեստապետը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱԱԾ<br>ք.Երևան, Նալբանդյան104 | «ԱԲԻ» ՍՊԸ<br>ք. Երևան Նորքի 11փ 15տ |
| ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի<br>գործառնական վարչություն<br>Հ/հ 900011301067<br>ՀՎՀՀ 01507079 | Արմսվիսբանկ<br><br>Հ/հ 2500010620670100<br>ՀՎՀՀ 01526588 |
| Տնօրենի տեղակալ<br>Ա. Հակոբյան | Տնօրեն<br>Գ. Քեշիշյան |

Հավելված N 2
«10» 03 2020թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
Ն11/207-2020

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 3 | 18231210/507 | կիտել և կիսաշրջազգեստ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1552500,0 | 1552500,0 | 1552500,0 | 1552500,0 | 1552500,0 | 1552500,0 | **1552500,0** |
| 4 | 18231210/506 | կիտել և կիսաշրջազգեստ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 630000,0 | 630000,0 | 630000,0 | 630000,0 | 630000,0 | 630000,0 | **630000,0** |
| 5 | 18231410/505 | կիտել և տաբատ | 0 | 0 | 0 | 6585300,0 | 6585300,0 | 6585300,0 | 6585300,0 | 6585300,0 | 6585300,0 | 6585300,0 | 6585300,0 | 6585300,0 | **6585300,0** |
| 8 | 18221100/503 | անջրանցիկ հագուստ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 4014000,0 | 4014000,0 | 4014000,0 | 4014000,0 | 4014000,0 | 4014000,0 | **4014000,0** |
| 41 | 35811160/515 | մարտական հանդերձանք | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 4368000,0 | 4368000,0 | 4368000,0 | 4368000,0 | 4368000,0 | 4368000,0 | **4368000,0** |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 43 | 35811160/517 | մարտական հանդերձանք | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 5472300,0 | 5472300,0 | 5472300,0 | 5472300,0 | 5472300,0 | 5472300,0 | 5472300,0 |
| 44 | 35821400/513 | դրոշներ | 0 | 0 | 64800,0 | 64800,0 | 64800,0 | 64800,0 | 64800,0 | 64800,0 | 64800,0 | 64800,0 | 64800,0 | 64800,0 | 64800,0 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԱԲԻ» ՍՊԸ
ք. Երևան Նորքի 11փ 15տ
Արմսվիսբանկ

Հ/հ 2500010620670100
ՀՎՀՀ 01526588

Տնօրեն

Գ. Քեշիշյան

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ ____________________ |
| հվհհ ____________________ | հվհհ ____________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«   » «        » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «   » «          » 20   թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*« » 20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________
Գնորդի անվանումը / Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ______________ -ին կնքված N ______________
պայմանագրի կնքման ամսաթիվը / պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________ ազգանուն, անուն | ______________ ազգանուն, անուն |
| ______________ Ստորագրություն | ______________ ստորագրություն |